ԲԱՑ ՆԱՄԱԿ

(Նախազգուշացում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ին)

Հարգելի՝ գործընկերներ,

Վերջին ժամանակաշրջանում տարբեր տեղական, պետական և միջազգային կազմակերպություններից նամակներ ենք ստանում այն մասին, որ Հայաստանում գործող «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն (*այսուհետ նաև ԻԿՀԿ*) «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (*այսուհետ նաև ՆՍՀԿ*) և անձամբ ՆՍՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյանի հասցեին հաճախ հնչեցնում է արատավորող տեղեկություններ:

ՆՍՀԿ-ն չէր հրապարակի սույն բաց նամակը, եթե ԻԿՀԿ-ի կողմից հնչեցվող արատավորող և զրպարտող տեղեկությունները չկրեին հաճախակի բնույթ:

Մասնավորապես հիմք ընդունելով ԻԿՀԿ-ի 2018թ.-ի մայիսի 7-ին CRG CCM Armenia-ին ուղարկված նամակը՝ ցանկանում ենք անդրադառնալ և տալ պարզաբանումներ դրանում բարձրաձայնված հարցերին:

Այսպիսով՝

- ԻԿՀԿ-ն Ս. Գաբրիելյանին մեղադրում է բացահայտ տրանսֆոբիայի մեջ:
    - «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իր նոր ռազմավարության շրջանակներում շարունակում է աջակցել նորաստեղծ խմբերի և կառույցների հզորացմանը՝ ի նպաստ Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ համայնքի:
    - «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ֆինանսական, իրավաբանական և տեխնիկական աջակցությամբ հիմնադրվել են տրանսգենդեր անձանց համայնքահեն այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են **«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, «Քալրֆուլ Հառուս» սոցիալ-մշակութային իրավապաշտպան ՀԿ-ն, «Հանուն հզոր ապագայի» իրավապաշտպան ՀԿ-ն:**
    - Վերոնշյալ Կազմակերպությունները «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ստացել են ենթադրամաշնորհներ, մասնավորապես՝ **«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի հետ հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ ենթադրամաշնորհային պայմանագիր է կնքվել՝ վերջիններիս կողմից իրականացվող IDAHOT-ին նվիրված միջոցառմանը ֆինանսապես աջակցելու համար: Նույն Կազմակերպությանը տրամադրվել է մեկ այլ ենթադրամաշնորհ երկօրյա դասընթացի, հակախտրականության ռազմավարության մշակման և տեսահոլովակի պատրաստման համար:**

- ԻԿՀԿ-ն նամակում նշել է, որ ՆՍՀԿ Ապաստարանի հանձնաժողովը, նայելով տրանսգենդեր անձի դեմքին, մերժել է՝ ասելով, որ չի տեսնում ոչ մի խտրականություն նրա հանդեպ, իսկ երբ ԻԿՀԿ-ն հարցում է ուղարկել Ապաստարանի կանոնակարգը ստանալու մասին, ՆՍՀԿ-ն իրեն չի պատասխանել:

- 12.02.2018թ.-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն պատասխանել է Ապաստարանի կանոնակարգ տրամադրելու վերաբերյալ ԻԿՀԿ-ի 06.02.2018թ.-ի հարցմանը՝ նշելով.

  1. Ձեր կողմից վկայակոչված՝ 27.11.2005թ.-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածները ենթարկվել են փոփոխության: 06.12.2015թ.-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը սահմանված է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով: Հետևաբար, Ձեր կողմից վկայակոչված նորմերը տվյալ դեպքում կիրառելի չեն:

  2. 23.09.2003թ.-ին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը մեկնաբանում է օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որոնց իմաստով, **«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն չի մտնում տեղեկատվություն տրամադրող կազմակերպությունների ցանկի մեջ, հրապարակայնության ապահովման և հարցումներին պատասխանելու գործընթացներում չի առաջնորդվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով և չի կրում հարցմանը պատասխանելու պարտականություն:**

  - ԻԿՀԿ-ի կողմից ուղղորդված շահառուին մերժվել է ապաստարանի տրամադրումը՝ հիմք ընդունելով Ապաստարանի տրամադրման կանոնակարգի հետևյալ դրույթը. Ապաստարանի հայցը ենթակա է մերժման, եթե,

  1. առկա է հիմնավոր կասկած առ այն, որ անձը ցանկանում է տրամադրված ապաստարանն օգտագործել օրենքով արգելված նպատակներով:

  Տվյալ դեպքում Դիմումատուն հստակ նշել է, որ իրեն ժամանակավոր կացարանն անհրաժեշտ է սեռական ծառայություններ տրամադրելու համար: Վերջինիս կողմից նշված գործողությունները պարունակում են վարչական իրավախախտման տարրեր, իսկ ՆՀԿ-ի կողմից տվյալ գործողություններին նպաստելը կարող է հանգեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարմանը, այն է.

  պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարել կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը:

- ՆՀԿ-ն հարկ չի համարում անդրադառնալ անգրագիտության հետ կապված հարցին՝ հաշվի առնելով «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի ինչպես վերջին, այնպես էլ ՆՀԿ-ին ուղղված բազմաթիվ այլ ուղղագրական, կետադրական, շարադասական սխալներով և իրավաբանորեն թույլ հիմնավորված գրությունները: Միայն հայտնում ենք մեր դիրքորոշումն այն մասին, որ անգրագիտությունը բնորոշ է յուրաքանչյուր անհատին, և ՆՀԿ-ի կողմից այդ հարցում Տրանսգենդեր անձանց համայնքը թիրախավորված չէ:

- ԻԿՀԿ-ն նշել է, որ ՆՀԿ-ի կողմից ԳՖ-ի ֆինանսներով ծառայություններ մատուցելու արդյունքում տրանսգենդեր անձինք չունեն ապրանքների հասանելիություն.

- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն տեղեկացնում է, որ Ծրագրի շրջանակներում ձեռք բերված ողջ ապրանքը՝ պահպանակներն ու լուբրիկանտները, տրամադրվել են շահառուներին: Այլ հարց է, թե արդյոք հաշվի առնելով պահանջարկը՝ Ծրագրով կարող է լրացուցիչ ֆինանսավորում տրամադրվել առավել մեծ թվով ապրանքներ ձեռք բերելու համար:

- ԻԿՀԿ-ն իր նախորդ հայտարարություններում նաև նշել է, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Ս. Գաբրիելյանը դատվածություն ունի:

  - ՆՍՀԿ նախագահ Ս. Գաբրիելյանը հայտնում է, որ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Դեռ ավելին՝ Ս. Գաբրիելյանը 2009 թվականից ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների Խմբի անդամ է:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ փաստարկները՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն պաշտոնապես նախազգուշացնում է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ին զերծ մնալ ՆՍՀԿ-ի և Ս. Գաբրիելյանի հասցեին հնչեցվող պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող, վիրավորող կամ զրպարտող տեղեկատվությունից, որի չկատարման դեպքում ՆՍՀԿ-ն առկա բոլոր ապացույցների հիմքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կդիմի դատական պաշտպանության:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նպատակահարմար գտավ սույն բաց նամակն ուղարկել նաև բոլոր այն գործընկեր կազմակերպություններին և անհատներին, որոնք ստահոդ նամակներ են ստանում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ից:

Լավագույն ցանկություններով՝

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ

23.05.2018թ.

Կատարեց ՆՍՀԿ իրավաբան
Անահիտ Մկրտչյանը